ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Պռո Ինվեստ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
5	Երկհարկանի մահճակալ՝ Էլեգիա ապրանքանիշերի, որի կառուցվածքային և ֆունկցիոնալ պարամետրերը ապահովում են ամուր և հարմարավետ օգտագործում. ընդհանուր չափսերը՝ 209x 173x 86 սմ՝ պահպանելով ամրության և կայունության պահանջները: Վերին հարկում տեղակայված քնելու հատվածը ունի 80 x 190 սմ չափերի օգտակար մակերես, իսկ ներքևի հատվածը բազմոցի տեսքով, բացվող մեխանիզմով և ունի հնարավորություն լրացուցիչ մահճակալ դառնալու՝ 120 x 190 սմ չափերի քնելու մակերեսով, ինչպես նաև առկա է պահոց իրերի համար: Կառուցվածքային հարմարավետությունն ապահովելու նպատակով վերին հարկ տանող աստիճանները ամրացված են մահճակալի կողային հատվածին, արտադրված են չժանգոտվող մետաղից և համալրված բռնակներով՝ ապահովելու անվտանգ և հարմարավետ բարձրացում: Հավաքածուի պարտադիր բաղադրիչ են վերին և ներքևի հարկերի համար նախատեսված ներքնակները: Արտադրության հիմքում կիրառված են որակյալ լամինացված ԼԴՍՊ, որն ապահովում է ինչպես գեղագիտական, այնպես էլ մեխանիկական ցուցանիշների բարձր որակ: Ապրանքը շահառուի հասցե է մատակարարվելու քանդված վիճակում՝ ամբողջությամբ կցամասերով, գործարանային ստվարաթղթե և պաշտպանիչ փաթեթավորման մեջ, որտեղ յուրաքանչյուր տարր լրացուցիչ ապահովված կլինի հաստ թղթով կամ փրփրապատ շերտերով՝ տեղափոխման ընթացքում հնարավոր վնասներից պաշտպանելու համար: Գույնը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Հավաքումն իրականացվելու է շահառուի բնակարանում՝ մատակարարի միջոցներով: Մատակարարի կողմից կտրամադրվի 6 ամիս երաշխիք, իսկ մատակարարման պահին արտադրողից կամ մատակարարից պահանջվում է ներկայացնել ապրանքի

	համապատասխանության հավաստագրեր և սերտիֆիկատներ, որոնք հաստատում են դրա համապատասխանությունը գործող տեխնիկական նորմերին և ստանդարտներին: Մատակարարումը կատարել անհրաժեշտ քանակներով՝ պատվիրատուի նախնական պահանջի (հայտի) հիման վրա՝ այն ներկայացվելուց հետո 3-օրյա ժամկետում: Նախնական հայտը ներկայացվում է էլեկտրոնային փոստի միջոցով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Про Инвест в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁՐ-26/75 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
5	